

հայկազունի քաղաք
պարսկաստանի քաղաք

Հայաստանի շրջան

IV - IV

902.6

Դմ-84



ՀԱՅԿ. ԽՈՋ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ № 1

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՋ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

IV

ՎԱՂԵՏԻՆՈ ԱՐԲՈՋԱՄԱՆ

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ - ԱԼԲՈՄ)

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՈՎ

**Исторические памятники
Армянской ССР**

IV

АШТАРАКСКИЙ РАЙОН

(ПУТЕВОДИТЕЛЬ-АЛЬБОМ)



ՅԵՐԵՎԱՆ — 1940

5 OCT 2011

ՀԱՅԿ. ԽՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

902.6
Խ - 84
մ

ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՔԱՆ ՁԵՄ
**СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР**
**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

IV

Պ.Ա.ԼԵՅՏԻՆԱ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ - ԱԼԲՈՄ)

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՈՎ

**Исторические памятники
Армянской ССР**

IV

АШТАРАКОВСКИЙ РАЙОН

(ПУТЕВОДИТЕЛЬ-АЛЬБОМ)

ՅԵՐԵՎԱՆ — 1940

17.06.2013

Պատ. խմբագիր՝ Ս. Պողոսյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարտիրոսյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնսուլ սրբագրիչ՝ Վ. Յեսսյան

18996

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշտարակի այժմյան շրջանը կազմում է պատմական Արագածոտն գավառի մի մասը:

Արագածոտն գավառը, վորը բռնում էր Արագած լեռան հարավային լանջերը, իր բնական ամբուխթյուններով, ճոխ բուսականությամբ ու առատ ջրերով նախապատմական ժամանակներից ի վեր յեղել է բնակելի ամենահարուստ վայրերից մեկը: Հայաստանի տերիտորիայի վրա դեռ վաղ ժամանակներից ազդել են բազմաթիվ ցեղեր, վորոնք VIII դարում (մեր թվականությունից առաջ) նվաճվել են խալդ-ուրարտացիների կողմից:

Սալդ-ուրարտական թագավորները—Մենուա (810—780), Արգիշտի (780—755) և Ռուսաս I (730—714)—իրենց արշավանքների ընթացքում նվաճում են Արաքսի հովիտը, ապա գրավում են Արագածի շրջանը, Շիրակի դաշտավայրը և Սևանա լճի շրջակայքում ապրող ժողովուրդներին: Սալդական այդ նվաճումների մասին են վկայում Աշտարակի շրջանի Թալիշ (հուն՝ Արուճ) գյուղում գտնված սեպագիր արձանագրությունը և նյութական կուլտուրայի այլ մնացորդները: Բացի դրանից, Հայաստանի տոհմատիրական շրջանի վերաբերյալ նյութական կուլտուրայի բազմաթիվ մնացորդներ են հանդիպում Աշտարակ գյուղից սկսած մինչև Շամիրամ գյուղի շրջակայքը: Աշտարակի շրջանում հանդիպում են խոշոր քարերով կառուցված բազմաթիվ շենքեր, վորոնք իբրև սկզբնական բնակարաններ են ծառայել մարդկանց համար: Ոչական գյուղի արևելյան կողմում, Կոնդ կոչվող բլուրի վրա կան բերդ-շենքերի մնացորդներ, վորոնք վերաբերում են նախնադարյան հասարակության վերջին շրջանի նյութական կուլտուրային: Այդպիսի մնացորդներով հարուստ են Լազրեան և Փարբի գյուղերի մերձակայքը, Փարբիից դեպի հյուսիս գտնվող «Գյալուր-Կալա»-ի շրջակայքը և Անբերդից Դըլլ տանող ճանապարհը: Սակայն, նյութական կուլտուրայի մնացորդների ամենամեծ խմբավորումը, վորը հանդիսանում է մեն-



1040 40 (15553-58) 9

Հանձնված է արդարություն 5/XII 1930 թ.
Մտորարկված է տպագրության 26/XII
Գլավ. լիպոր № 6. 2030. պատ. № 865, տիրած 1000

Պետական արխիվի Հրատարակչության տպարան, Յերևան, Արավյան № 104

հիրներով, կրոմլեխներով և դոլմեններով հարուստ մի դաշտ, գտնվում է Կոշից Շամիրամ տանող ճանապարհին:

Տոնմատիրական շրջանին են պատկանում ջրի պաշտամունքի հետ կապված «Վիշապ» քարերը. դրանք ձկան կերպարանքով ահագին մեծությամբ քարեր են, վորոնց վրա փորագրված են զանազան նշաններ. այդ վիշապներից գտնվել են նաև Արագածի լանջերում՝ Անբերդից վերև, Արխաշա գետի ձախ ափի բարձունքում: Փետրալակի հասարակության շրջանում Աշտարակի մի շարք գյուղեր յեղել են հայ Արշակունի թագավորական տոհմի՝ սեփականություն և վորպես բերդեր, ձմեռանոցներ ու դորակայաններ են ծառայել այդ դինաստիայի համար: Այժմյան Թալիշ գյուղը (հնում՝ Արուճը) յեղել է Արշակունիների զորակայան և ձմեռանոց: Աղցում են գտնվում Արշակունի թագավորների դամբարանները: Արագածոտն գավառի մյուս գյուղերը կազմել են այլ ֆեոդալների սեփականություն—որինակ՝ Ոշական գյուղը, վորտեղ թաղված է հայ գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը, յեղել է Ամատունյաց տան սեփականություն:

Քասախ գետի ափն՝ ամբողջ յերկարությամբ ծածկված է բնական և արհեստական այրերով, վորոնք տեղական բնակչության համար վորպես պաշտպանության վայրեր են ծառայել գրեթե բոլոր դարերում:

Շինարարության տեսակետից VII դարը բեղմնավոր ժամանակաշրջաններից մեկն է յեղել պատմական Հայաստանում: Այդ դարի շենքերից Աշտարակի շրջանում աչքի յեն ընկնում Թալիշ և Յեղվարդ գյուղերի յեկեղեցիները, վորոնք կառուցվել են Մամիկոնյան իշխանների կողմից և իրենց ճարտարապետական արվեստով VII դարի նշանավոր կոթողներ են հանդիսանում:

Բազրատունիները, վորոնց կենտրոնն էր Անին, IX դարի վերջերին միաժամանակ իրենց գլխավոր ամրոցներից մեկը դարձրին Աշտարակի շրջանում գտնվող Անբերդը: Վերջինս կառուցել է յին Պահլավունիները, վորոնցից հետագայում գնել է յին Բազրատունիները: Վերջիններիս տիրապետության անկումից հետո, XI դարում, սելջուկյան արշավանքների և ներքին կռիվների հետևանքով ընդհանուր շինարարական կյանքը Հայաստանում՝ տեղ-տեղ կանգ է առնում: Հայաստանի ֆեոդալական ուժեղ

¹ Արշակունիների դինաստիան Հայաստանում իշխել է 66—429 թ. թ.:

աներից շատերը վոչնչանում կամ գաղթում են բուն յերկրից դուրս:

XII—XIII դարերի ընթացքում, վրաց տիրապետության ժամանակ, Հայաստանում կրկին հանդես են գալիս հայ ֆեոդալական խոշոր տներ, վորոնք մեծ կալվածներ են ձեռք բերում և զարկ են տալիս նորանոր կառուցումների: Այդ նոր ֆեոդալական տներից աչքի յեն ընկնում Ջաքարյանները, վորոնք կարողանում են նվաճել հյուսիսային Հայաստանի մեծ մասը (վրաց արքունիքում սրանք յեղել են Գիորգու և Թամարայի սպասալարները): Ջաքարյաններից՝ Ջաքարեն և Իվանեն առաջնակարգ նշանակություն տալով Արագածոտն գավառին, սելջուկներից գրավում են Անբերդը և, ի նշան իրենց այդ նվաճումների, այնտեղ ՈՆԹ (1200) թվականին հաղթական կոթող են կանգնեցնում, վորն այժմ գտնվում է Խնաջուր գյուղի յեկեղեցու դռան կողքին:

Անբերդի նվաճումից հետո, Աշտարակի շրջանի մի մասի իշխանությունը Ջաքարյանները հանձնում են իրենց վասսալ ֆեոդալներից Վաչուտյան տոհմի Վաչե իշխանին: XII—XIII դարերում, բացի Վաչուտյաններից, Աշտարակի շրջանում իշխող տներից է յին—Աղիզբեկյանները Յեղվարդում, Սահմադիներն ու նրանց ժառանգները՝ Ոշակունում:

Նյութական կուլտուրայի մնացորդներից XIII—XIV դարերում Աշտարակի շրջանում աչքի յեն ընկնում Ոհանավանքը, Դըղըր, Սաղմոսավանքը, Յեղվարդի յեռահարկ յեկեղեցին և այլն:

XIII դարի յերկրորդ կեսից սկսած՝ փոփոխություն է կատարվում Հայաստանի քաղաքական կյանքում:

Մոնղոլների վարած քաղաքականության հետևանքով հետզհետե թուլանում և մանրանում են աշխարհիկ ֆեոդալները. վերջիններիս շարժական և անշարժ կայքերի մի զգալի մասն անցնում է վանքերին: Սկսում է խոշոր չափով ուժեղանալ յեկեղեցու ազդեցությունը: Աշտարակի շրջանում խոշոր կալվածատեր վանքեր են յեղել՝ Արուճը, Ոհանավանքը, Սաղմոսավանքը և Դըղըր:

XVII—XVIII դարերում առևտրական հարաբերությունները շարունակում են զարգանալ, և Հայաստանն առևտրական կապերով կապվում է մի շարք յերկրների հետ: Աշտարակի շրջանը նույնպես գտնվում էր առևտրական ճանապարհների հանգույցակետում. այդ շրջանով անցնող առևտրական գիծը Յերևանը կապում էր Թբիլիսիի հետ: Այդ գիծն անցնում էր Աշտարակի,

Ապարանի և Փամբակի վրայով: Այն ժամանակվա պատմադիրներ-
րից Ջաքարեն հիշում է, վոր Աշտարակից Ապարան տանող ճա-
նապարհի վրա գտնվող Կարբի գյուղը XVII դարում հանդիսա-
ցել է առևտրական կենտրոններից մեկը: Այդ ժամանակաշրջանի
նյութական կուլտուրայի մնացորդներից են Աշտարակ և Ոչական
գյուղերի կամուրջները, վորոնք վերակառուցվել են առևտրական
դասի ոժանդակութեամբ:

Վերևում հիշատակված պատմական հուշարձանները վնչ
միայն հայկական հին ճարտարապետութեան ու արվեստի կո-
թողներ են, այլև նրանք իրենց վրա յեղած բազմաթիվ արձա-
նազրություններով կարևոր աղբյուր են հանդիսանում Հայաս-
տանի պատմութեան համար: Այդ արձանազրությունները մեզ
հնարավորութեան են տալիս լուսաբանելու Հայաստանի անցյալ
հասարակական կյանքը, դրանց միջոցով մենք ծանոթանում ենք
վոչ միայն այս կամ այն հուշարձանի կառուցման ու նրա վերա-
նորոգման հետ կապված խնդիրներին, այլև ժամանակի շրջա-
նաբարական, հարկային և կալվածային խնդիրներին:

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿՍԵՆ ՀՈՒՇՈՒՐՁՆԵՐԸ

Ա Շ Տ Ա Ր Ա Կ

Աշտարակ գյուղը, վոր այժմ հանդիսանում է շրջանային
կենտրոն, գտնվում է Յերեանից 22 կիլոմետր հեռավորութեան
վրա, Արագածի ստորոտում, Գասախ գետի աջ ափին:

Յերեանից Աշտարակ կարելի չէ գնալ յերկու ճանապարհով՝
անմիջապես Աշտարակ տանող խճուղով և Վաղարշապատի վրա-
յով դեպի Աշտարակ տանող ճանապարհով. վերջինս համեմատա-
բար յերկար է:

Աշտարակը յեղել է պատմական Հայաստանի հին գյուղերից
մեկը. նա հարուստ է պատմական հուշարձաններով, վորոնք վի-
բարերում են V—XIII դարերին. այդ հուշարձաններից են՝

Ա. Ծիրանավոր.— Գյուղի յեղին, Աշտարակի կամրջի գի-
մաց, Գասախ գետի ափին բարձրանում է պարսպաձև մի ժայռ,
վոր կոչվում է Փակաբեդ: Արևմտյան կողմից բերդն ամրացված
է պարիսպներով, վորոնց մնացորդները մինչև այժմ ևլ կանգուն
են. արևելյան կողմից բերդը պաշտպանված է բնական ամրու-
թյուններով և ձորով: Գյուղի այդ մասը հնում կոչվել է Բերդա-
բաղ: Այդտեղ է գտնվում Ծիրանավոր (բաղիլիկաձև) հուշարձա-
նը, վորը կառուցված է V—VI դարերում:

Նրա հին պատերին կից բարձրանում են կրկնապատեր, վո-
րոնք հուշարձանին տալիս են ամրոցի ձև: Հուշարձանը կառուց-
վել է չորս սյուների վրա, ունի յերկու խորան և արևմտյան
պատի վրա մեկ յերկարավուն լուսամուտ: Այժմ Ծիրանավորը
կիսավեր վիճակում է՝ տանիքն ամբողջովին քանդված է, մնում
են միայն պատերը (Ալբոմ՝ նկ. 1):

Բ. Կարմրավոր.— Գյուղի հյուսիս-արևելյան թաղամասում է
գտնվում Կարմրավորը, վորը կառուցվել է VII դարում (Ալբոմ՝
նկ. 2). սա խաչաձև մի յեկեղեցի չէ, վորի վրա բարձրանում է
ութանկյուն գեղեցիկ գմբեթը. թե յեկեղեցու և թե գմբեթի

տանիքները ծածկված են կարմիր կղմինդրներով, վորոնք իրար հետ միացված են շաղախով և ամրացված են յերկաթե դամերով: Կարմրավորի պատի քիվերը (կառնիդները) ծածկված են կողոպակաճե քանդակներով, իսկ գմբեթի քիվը դարձրված է տերևաճե քանդակներով: Հուշարձանի վերևի մասն արտաքուստ շրջապատված է գոտի կազմող միատող արձանագրությամբ, վորն սկսվում է հարավայնի պատից. այդ արձանագրությունը վերաբերում է հուշարձանի շինությանը: Հուշարձանի գլխավոր դռան վրա, վերևի կողմից, քանդակված է մի արձանագրություն. վերջինս վերաբերում է Աշտարակի մեծ առվի նորոգմանը, վորը կատարվել է Հակոբ Յերեցի կողմից ՉԽՍ. (1292) թվականին. հուշարձանը շրջապատված է պարսպով՝ շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանատուն, վորի տապանաքարերի մեծ մասը պատկանում են XIII դարին. դրանցից նշանավոր է մի խաչքար, վորի ստորին կողմում կա մի մեծ խորշ, դրա համար ել խաչքարն անվանում են «Ծակ քար» (Ալբում՝ նկ. 3—5):

Գ. Մարիան (Մարին).—Աշտարակ գյուղի հյուսիս-արևելյան թաղամասում բարձրացող մի յեկեղեցի յե, վորը կառուցված է 1281 թվականին. արտաքուստ քառանկյուն է, ներքուստ՝ խաչաձև բազմանկյուն թմբուկով և սրածայր գմբեթով: Մարինեյի արևմտյան պատի աբսիդայի գլխին կառուցված է զանգակատունը: Նույն պատի վրա դրսի կողմից քանդակված է արևի ժամացույցը: Արժեքավոր ու հետաքրքրական է Մարինեյի գլխավոր դռան ճակատակալ քարի վրա նկարված Փրեսկոն (պատի սվաղի վրա, յուղաներկ), վորն առնված է ծաղկանկարներով դարձրված շրջանակի մեջ ու պատկերում է հիմար և իմաստուն կույսերի առակը (Ալբում՝ նկ. 6):

Հուշարձանի հարավային մուտքի դիմաց, հրապարակի վրա կան XVII—XVIII դարերին պատկանող գերեզմաններ: Այդ նույն հրապարակի արևելյան և արևմտյան ծայրերում բարձր պատվանդանի վրա դրված են խաչքարեր, վորոնցից մեկը կրում է ՉԽ (1291) թվականը, իսկ մյուսը, վոր այժմ ընկած է գետինին, ունի 1599 թվագրություն: Մարինեն նույնպես շրջապատված է բրդաձև պարսպով, վորը յերեք կողմից ունի դռներ:

Աշտարակ գյուղի և շրջանի շրջինարարական գործի մասին վկայում է գյուղի մեծ առուն՝ հին շրանցքը, վորն սկիզբ է առնում Սաղմոսավանք գյուղից: Այդ առուն XII դարում շինել է Գեվորդ վարդապետը՝ «Ականատեսը»: Գյուղի կենտրոնում առուն

բաժանվում է յերկու գլխավոր ճյուղերի՝ այգիներին հարկ յեղած չափով Գուր մատակարարելու համար: Ըստ հին սովորության, ջրի բաժանման մեջտեղը ծառի յերկար բուն է դրված, վորի վրայով ջուրը հոսում և բաժանվում է յերկու մասի: Ջուրն այսպես բաժանելու սովորությունը գալիս է հնից և մինչև վերջերս պահպանվել էր: Այդեգործական այդ շրջանում ջրի սակավության հետևանքով յեղած դժվարություններն իրենց արտահայտությունն են դառել նույնիսկ տապանաքարերի վրա արված փորագրությունների մեջ: Գյուղի հյուսիս-արևելյան մասում, գերեզմանատանը, «Ծակ քար» կոչված խաչարձանի շրջապատում, մի տապանաքարի վրա իր բոլոր մանրամասնություններով փորագրված է մի այգի, վորը բաժանված է յերկու մասի: Մասերից յուրաքանչյուրն ունի խաղողի առանձին թմբեր՝ փոքրիկ առուններով, այգուց դուրս նկատելի յե մեծ առուն, վորից ճյուղավորվում են այգին մտնող փոքրիկ առունները: Ըստ ավանդության՝ տապանաքարի տակ թաղված են յերկու հարազատ յեղբայրներ, վորոնք իրար սպանել են ջրի պատճառով:

Դ. Աճարակի կամուրջ.—Գտնվում է գյուղի արևելյան կողմում՝ Գասախ գետի վրա, կառուցված է շատ հին ժամանակներից, սակայն XVII դարում վերանորոգվել է սրբատաշ քարից պատրաստված յերեք տարբեր չափի յերկկենտրոն կամարներով. մեծ և փոքր կամարների արանքում արձանագրություն կա կամրջի կառուցման մասին (Ալբում՝ նկ. 7):

Յ Ե Ղ Վ Ա Ր Դ

Յեղվարդ գյուղը գտնվում է Աշտարակից 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Արա լեռան հարավ-արևելյան ստորոտում: Յեղվարդը Հայաստանի հնագույն գյուղերից է, վորի մասին հիշատակում է VII դարի պատմիչ Մերեոսը: Այս գյուղը հայտնի յե իր պատմական արժեքավոր հուշարձաններով, վորոնցից յերեքը գտնվում են գյուղի կենտրոնում, իսկ մեկը՝ գյուղից դուրս: Այդ հուշարձաններն են՝

Ա. Կարուղիկ.—Գտնվում է գյուղի կենտրոնում, խոշոր բազիլիկա յե, կառուցված VI դարում, սրբատաշ քարից՝ յերկշարք չորսական սյուների վրա: Հուշարձանն արտաքին կողմից շրջապատված է գոտի կազմող միատող արձանագրությամբ: Այժմ մնում են միայն պատի ստորին մասերը՝ մոտ 3—4 մետր բարձ-

բուժյամբ (Ալբրոմ' նկ. 8—10): Բաղրիլիկայի դիմաց կառուցված է V—VI դարերին պատկանող մի յեկեղեցի, վորի ավերակներն են միայն մնում (Ալբրոմ' նկ. 11, 12):

Բ. Ջորաձոր.—Այս հուշարձանը կառուցել և Գրիգոր Մամիկոնյան իշխանը VII դարի յերկրորդ կեսին. հուշարձանը գտնվում է Արա լեռան ստորոտում, Յեղվարդ գյուղից 3 կիլոմետր հեռու: Յեկեղեցին արտաքուստ բազմանկյուն և (ներսի կողմից ունի ութ աբսիդա), արտաքին կողմից, արտիդանների արանքում, ունի խոր նիշաններ: Հուշարձանի քիվը (կառնիղը) զարդարված է դործվածքաձև քանդակներով, լուսամուտների պակներին քարերի մի մասի վրա քանդակված են խաչողի վողկույզներ, իսկ մյուս մասի վրա քանդակված է նույն: Հուշարձանի կենտրոնական մասում բարձրանում և լայնանիստ բազմանկյուն գմբեթը, վորի մեծ մասը վոնչացված է (Ալբրոմ' նկ. 13, 14):

Վ. Ս. Սասվաձաձիկ.—Այս յեռահարկ քանդակազարդ հուշարձանը գտնվում է գյուղի կենտրոնում. կառուցված է XIV դարի սկզբին: Այս հուշարձանը, չնայելով իր փոքրիկ ծավալին, յեռահարկ և և ունի քառանկյուն ձև. շինված է կարմրագույն սրբատաշ քարից, առանց սյուների: Հուշարձանի շտաշին և յերկրորդ հարկերի քիվերը զարդարված են շղթայաձև քանդակներով և ամեն մի պատի վրա կա մեկ լուսամուտ՝ զարդարված բուսական որնամենտով. գլխավոր մուտքը գտնվում է արևմտյան կողմում: Հուշարձանի ներքևի հարկի լուսամուտները մեծ են և խաչաձև. լուսամուտի փորվածքի ստորին թևի մեջ՝ նեղ, յերկար և կամարակապ: Այդ փորվածքը զարդարված է քանդակներով:

Յերկրորդ հարկի լուսամուտներն ավելի նրբաբլետա են, ունեն քառանկյուն լայն բացվածք և բաժանվում են յերկուական մասերի՝ մեկական գեղաքանդակ սյուներով. լուսամուտների ճակատակալ քարերի վրա փորված են գաղանների բարձրաքանդակներ, վորոնք շրջապատված են շղթայաձև քանդակներով: Հուշարձանի յերկրորդ հարկի գլխավոր մուտքը քառանկյունաձև է և կամարակապ, մուտքը բոլոր կողմերից շրջապատված է յերկշարք քանդակներով, վորոնք գրսից ունեն շղթայաձև քանդակներ, իսկ ներսից՝ բազմանկյուն աստղաքանդակներ: Մուտքի ճակատակալ քարից սկսած մինչև յերկրորդ հարկի քիվը (կառնիղը) բարձրանում է հսկայական մեծությամբ բարձրաքանդակ մի խաչ, վորի ներքևի մասում, անմիջապես դռան ճակատին, յերկու կողմից փորված են գանդանների բարձրաքան-

դակներ: Վերջիններս իրենց բարձր արվեստով յեղակի տեղ են գրավում XIII—XIV դարերի արժեքավոր կոթողների շարքում. այդ խաչի վերին յերկու կողմերում նույնպես կան բարձրաքանդակներ:

Հուշարձանի յերրորդ հարկը կազմում է գմբեթը, վորը շինված է գեղեցիկ քանդակազարդ սյուներով և վորի թև բազան և թև խոյակները զարդարված են հյուսվածքաձև քանդակներով: Գմբեթի ներսի կողմում սպիտակավուն տառերով գրված է. «Ի թւին 228 (1328) շինեցաւ», իսկ գլխաւոր դռան վրա գրված է՝ «Ի թւին 22 (1321) շինեցաւ եկեղեցիս»: Ըստ արձանագրական տեղեկությունների՝ այդ յեկեղեցին շինել և Չաքարիա սպասարարի պաշտոնյաներից մեկը՝ Աղիդբեկը, իր ամուսին Վախախի հետ միասին (Ալբրոմ' նկ. 15—17):

Ո Շ Ա Ն Ա Վ Ա Ն Ք

Ռհանավանը գյուղը գտնվում է Ապարան տանող խճուղու վրա. այդ գյուղումն է գտնվում համանուն հուշարձանը, Աշտարակ գյուղից 6 կիլոմետր դեպի հյուսիս, Գասախ գետի աջ ափին, մի գեղեցիկ բարձունքի վրա: Մինչև այդ նշանավոր վանքի կառուցումը նրա տեղում շինված է յեղել հասարակ ձևի մի մատուռ. այդ մասին վկայում են թե հայ պատմագիրները և թե հին պատերի այն մնացորդները, վորոնք պահպանվել են մինչև որս: Պատմիչները հիշատակում են, վոր 573 թվականին, Աշոտ Դմնեցու ժամանակ, հին փոքրիկ փայտածածկ յեկեղեցին վերաշինվում և ու տանիքը ծածկվում է կոփածո քարով:

Ռհանավանքի ներկա շենքը 1217 թվականին կառուցել է Չաքարյանների վասալ Վաչե իշխանը՝ հին յեկեղեցու տեղում (Ալբրոմ' նկ. 18): Կառուցմանը վերաբերող արձանագրությունը փորագրված է տաճարի հյուսիսային պատի վրա: Գմբեթավոր այդ շենքն արտաքուստ քառանկյուն է, իսկ ներքուստ՝ խաչաձև, վոր առաջացել է ներսի անկյուններում դասավորված յերկհարկանի խորաններից: Տաճարի արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա շատ նուրբ արվեստով փորագրված է իմաստուն և հիմար կույսերի տեսարանը պատկերող բարձրաքանդակը, նույն դռան յերկու կողմերում պատի մեջ գրված են խաչքարեր, վորոնք իրենց նրբաքանդակ արվեստով հանդիսանում են XIII դարի նշանավոր կոթողներ:

Ոհանապանքի արտաքին ձևավորումը (նիշանները, լուսամուտները՝ իրենց խաչաձև որնամենտներով) նմանվում է Ախթալայի վանքին, բայց մշակված է ավելի պարզ ձևով: Տաճարը յերեք կողմից ունի զույգ նիշաններ: Այս հոյակապ շենքը կանգուն է յեղեղ մինչև 1918 թվականը:

Տաճարին կից, արևմտյան կողմում, 1250 թվականին Վաչեյի վորդի Բղրդի իշխանը կառուցել է գավիթը, վորը շինված է կոփածո սև քարով, չորս սյուների վրա. սյուներից յերկուսի բները կլոր են, յերկուսը՝ բաղմանկյուն, վորոնց վրա բարձրանում է լայնանիստ գմբեթը 12 սյուներով՝ մեջ ընդ մեջ բաղմանկյուն և կլոր: Գավթի արևմտյան պատը դրսի կողմից զարգարված է զույգ կիսավորմասյուներով, վորոնք իրար միանում են բողբոջաձև վորմնակամարներով: Մուտքն ավելի հանդիսավոր դարձնելու համար գոտան վերևի մասում բացված է խոշոր կրկնափ լուսամուտ, վորը կլոր սյունով բաժանվում է յերկու մասի. բաժանող սյան խոյակն ունի քանդակներ:

Գավթի կամարավոր ծածկը ներսից յուրաքանչյուր մասում ունի տարբեր վոճ—արևելյան կենտրոնական մասում՝ սալակատիկավոր, հարավ-արևելյան մասում՝ խաչաձևվող, հարավային կենտրոնական մասում՝ հայելանման, մյուս կողմերը կրկնվու են, իսկ մուտքի մոտ արևմտյան կենտրոնական մասի կամարի ծածկը գլանաձև է:

Տաճարի արտաքին ու ներքին պատերի և գավթի վրա կան բազմաթիվ արձանագրություններ, վորոնք մեծ մասամբ վերաբերում են նվիրատվություններին: Այդ արձանագրություններից մեկում, վոր վերաբերում է ՈՂԲ (1243) թվականին, հիշատակված է, թե Անբերդը իբրև սեփականություն տրված է ս. Կարապետի (Ոհանապանք) յեկեղեցուն: Այդպիսի նվիրատվությունները միջոցով Ոհանապանքը XVII—XVIII դարերում ձևով է բերում խոշոր կալվածներ. նա իր տնտեսական կարողությամբ աչքի յեր ընկնում Աշտարակի շրջանում:

Տաճարին և գավթին կից, հյուսիսային կողմում կան յերկու փոքրիկ յեկեղեցիներ, վորոնց մուտքը գավթի և տաճարի ներսից է: Այդ յերկու փոքրիկ յեկեղեցիներն ավելի հին են, քան Ոհանապանքը, թեպետ վերանորոգված են ու ժամանակներում:

Հուշարձանի հարավային կողմում, պարսպին կից, ներքուստ կան հին շենքերի հիմնապատերի մնացորդներ: Պարսպի ներսի և դրսի կողմերում տարածվում է գերեզմանատուն՝ տապանաքարե-

րով և քանդակազարդ խաչերով, վորոնցից աչքի յե ընկնում վանքի հարավային կողմում բարձր քարաշար պատվանդանով 1311 թվականի մի կոթող, վորը յերևի գերեզմանարձան է (Ալբում՝ նկ. 19—23):

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Վ Ա Ն Ք

Սաղմոսավանքը գտնվում է Ոհանապանքից դեպի հյուսիս: Այդ գյուղում է համանուն հուշարձանը, վորն ընկնում է Ոհանապանքից 5 կիլոմետր հեռավորության վրա՝ Արա լեռան ստորոտում, Գասախ գետի յեղրին: Այս հուշարձանն իր ճարտարապետական վոճով նման է Ոհանապանքին, և կառուցել է նույն Վաչե իշխանը 1215 թվականին: Բուն տաճարն առանց սյուների յե, հատակագիծը քառանկյուն է, դրսի կողմից յուրաքանչյուր պատին կան զույգ նիշաններ. ներսից ունի կրկնահարկ չորս խորան. արևմտյան թևի խորաններն ունեն պատերին հագցրած քարե սանդուղքներ:

Կլոր թմբուկ ունեցող գմբեթը հանգչում է տաճարի մեջ դուրս շեշտված չորս վորմնասյուների կամարների գլխին գոյացող շրջանաձև տարածության վրա:

Արևմտյան մասում, հուշարձանին կից, նույն դարում, տաճարից ավելի ուշ, կառուցված է գավիթը՝ խոշոր սրբատաշ քարից: Արևմտյան մուտքն առնված է քանդակազարդ շրջանակի մեջ, իսկ ճակատակալ քարը զարդարված է աստղաձև որնամենտներով: Գավթի ծածկը հանգչում է չորս սյուների վրա, վորոնցից յերեքը կլոր են, մեկը՝ բաղմանկյուն: Գավթի կամարավոր ծածկը ներսից շինված է նույն վոճով, ինչ վոր Ոհանապանքը, գավթի արևելյան մասի վորմնասյուներն աչքի յեն ընկնում իրենց խմբվածությամբ. նրանց վերևի մասերը զարդարված են շղթայաձև որնամենտներով:

Ցածրադիր բութ գմբեթի վեղարը զարդարված է պարանահյուս յերկրաչափական ուղուցիկ որնամենտներով, վորոնց արանքներում կա մի խաչքար: Գավիթը ներսից ունի դամբարաններ, խաչքարեր, իսկ պատերի վրա, թե դրսից և թե ներսից՝ արձանագրություններ (Ալբում՝ նկ. 24, 25):

Գավթի հարավային պատին կից կա մի փոքրիկ յեկեղեցի, ս. Աստվածածին անունով, վորը 1235 թվականին շինել է Քյուրդ իշխանը: Այս հուշարձանի ծածկը նստած է վորմնասյուների կա-

մարների վրա, վորոնցից մեկը խաչաձև է: Խորանի վրա բարձրա-
նում է մի մատուռանման փոքրիկ սենյակ, վորի մուտքը յեկեղեցու
ներսից է՝ քարե սանդուղքներով: Այդ սենյակը վորպես գրատուն
է ծառայել:

Սաղմոսավանքից մինչև Ոհանավանք, Քասախի աջ ափին
տարածվում է մի ընդարձակ գյուղատեղի՝ Սերկեվիլ անունով.
վանքից մինչև այդ գյուղատեղին ընկած է մի ձորակ, վորը կոչ-
վում է «Վասակամուտ». այդ գյուղատեղիում կա մի հին փոք-
րիկ յեկեղեցի, կան անտաշ քարերից շինված ամրոցի մնացորդ-
ներ:

Կ Ա Ր Բ Ի

Կարբի գյուղը գտնվում է Աշտարակից 3 կիլոմետր հեռա-
վորության վրա, խճուղու յերկու կողմում: Այս գյուղի մասին,—
վորը համարվել է գյուղաքաղաք,—հայ մատենագրության մեջ
հիշատակվում է դեռևս XIII դարից: XVII դարում Կարբին
հայտնի դարձավ վորպես առևտրական կենտրոն. նա կապված էր
Իրանի, Իանձակի, Թրիլիսիի և այլ յերկրների ու քաղաքների
հետ: Կարբեցի խոշոր առևտրականներից մեկը՝ պարոն Այվազը,
1691 թվականին կառուցել է ս. Աստվածածին յեկեղեցին: Այդ
հուշարձանն ունի փոքրիկ գմբեթ և շինված է չորս սյուների
վրա: Դիսավոր դուռը, վորը գտնվում է արևմտյան կողմում,
յերկու կողմերից ունի մեկական խաչքար, գրանցից մեկի վրա
փորագրված է ՊԶԲ (1433) թվականը, իսկ մյուսի վրա՝ «Յով-
հաննէս կազմող»: Հուշարձանն ունի արձանագրություններ, վո-
րոնց մեծ մասը փորագրված է հարավային պատի վրա՝ դրսից:

Հուշարձանին կից, արևելյան կողմում, շինված է բարձր
քառակուսաձև հատակադժով հին յեկեղեցին՝ մեծ զանգակատնով:
Այդ հուշարձանն այժմ կիսավեր է: Բացի այս գլխավոր հուշար-
ձանից, գյուղի զանազան մասերում ավերակ վիճակում կան հինգ
փոքրիկ մատուռանման հուշարձաններ (Ալբում՝ նկ. 26):

Մ Ո Ւ Ղ Ն Ի

Մուղնի գյուղը գտնվում է Աշտարակից 2 կիլոմետր հեռու:
Հուշարձանը կառուցված է սրբատաշ քարի չորս սյուների վրա,
արևմտյան և հարավային կողմից ունի նուրբ արվեստով քան-

դակազարդված դռներ. յեկեղեցու արևմտյան կողմում շինված է
գավիթը՝ նույնպես չորս սյուների վրա, վորոնց կամարաձև
միացված տանիքի վրա բարձրանում է սյունազարդ գմբեթը:
Գավիթի սյուների խոյակները և դիսավոր դռն ճակատը զար-
դարված են դեղեցիկ քանդակներով: Արևմտյան պատի հյուսիսա-
յին թևի վրա վերևից փորագրված է հուշարձանի շինության
թվականը՝ ՌՃԺ (1661): Այս հուշարձանի սեղանի պատերը զար-
դարված են XVII—XVIII դարերին պատկանող Փրեսկոներով,
վորոնք մեծ արժեք ունեն (Ալբում՝ նկ. 27, 28):

Փ Ա Ր Բ Ի

Փարբին պատմական Հայաստանի հնագույն գյուղերից մեկն
է, այդ գյուղումն է ծնվել V դարի հայ մատենագիր Ղազար Փար-
պեցին: Փարբին հայտնի յե V դարում կառուցված իր բազիլի-
կայով, վորը կոչվում է «Ծիրանավոր»: Այս յեկեղեցին շինված
է գետի յեզրին, ունի միջին մեծություն, առանց սյուների: Հու-
շարձանի պատերին կից գրսի կողմից շարված են XIII դարին
պատկանող կրկնապատեր՝ տաշած քարերից և կրաշաղախով:
Կրկնապատերի վերին մասը ծառայել է վորպես ամրոց. այս
հուշարձանը մուտքի մոտ ունի դեպի գետը տանող մի ուրիշ
անցք, վորով դեպից ջուր են բերել պաշարվածների համար:
Փարբի գյուղի յեկեղեցին իր ճարտարապետական վճռով նման է
Աշտարակի «Ծիրանավորին»:

Գյուղի հարավ-արևելյան մասում կա XIII դարի մի այլ
յեկեղեցի, վորը կոչվում է «ս. Գրիգոր»: Այս հուշարձանի դուռն
ու պատերը կանգուն են. պատերից մեկի վրա փորագրված է
1264 թվականը կրող մի արձանագրություն:

Ո Ւ Շ Ի

Ուշին գտնվում է Աշտարակից 5 կիլոմետր հեռավորության
վրա. այս գյուղի հյուսիսային կողմում գտնվում է «ս. Սարգիս»
կոչված յեկեղեցին, վորը շինված է V դարում: Այս հուշարձանը
կազմված է յերեք հարակից յեկեղեցիներից, վորոնցից ամենա-
հինը փոքր յեկեղեցին է: Նրա արևելյան դռան վրա կա արձա-
նագրություն. փոքր հուշարձանին կից շինված է անսյուն գլմ-
բեթավոր տաճարը, վորի տանիքն ու գմբեթը XIX դարում

ե, նրանից մոտ 200 քայլ դեպի հարավ-արևմուտք փորված է մի գաղտնի անցք, վորի միջով քաղաքին շուր մատակարարող առուները բերված են Անբերդ. այդ առուներից մեկը տանում է դեպի դոյակը, իսկ մյուսը տարածվում է բերդի ներսում (Ալբոմ՝ նկ. 34):

1936 թ. Պետ. երմիտաժի կողմից ակադ. Որբելու ղեկավարութեամբ Անբերդում կատարված են պեղումներ:

Ք Ա Լ Ի Շ (ԱՐՈՒՃ)

Թալիշը գտնվում է Աշտարակից 22 կիլոմետր հեռավորության վրա: Թալիշ կարելի չէ գնալ ուղղակի Աշտարակից և Հոկտեմբերյան կայարանից—առաջին դեպքում հնարավոր է գնալ նաև սայլով, իսկ Հոկտեմբերյանից՝ հետիոտն:

Արուճ գյուղն ունի պատմական անցյալ, մնացորդներ կան նույնիսկ նախապատմական շրջանից. այդ շրջանում շատ են հանդիպում հին ամրոցների և բնակավայրերի մնացորդներ: Այս գյուղի արժեքավոր հուշարձաններից է VII դարում կառուցված ս. Գրիգորի անվան վանքը: Ըստ պատմագիրների տվյալների՝ Արուճը յեղել է Ֆեոդալների զորակայանը: Արաբական տիրապետության ժամանակ այդ վայրի կառավարիչ է նշանակվել Գրիգոր Մամիկոնյան իշխանը, վորը և շինել է այդ տաճարը (Ալբոմ՝ նկ. 35):

Թալիշի վանքը սքանչելի չէ միայն իր մեծությամբ ու բարձրությամբ, այլև շինարարական արվեստով: Այս հուշարձանի յուրահատկությունն այն է, վոր նա իր տիպով համարվում է կենտրոնական բարձր գմբեթ ունեցող շինք, վորովհետև գմբեթը գտնվում է բազիլիկայի կենտրոնական մասում, արևելյան կողմից ունի յերկու նիշաններ: Լուսամուտների ազդեցությամբ զարդարված են սրտաձև տերևներով. կան նաև աստղաձև որնամենտներ ու խազողի վողկույզներ: Աբսիդի յերկու կողմերում կան խորաններ, վորոնք ունեն աստիճաններ՝ դեպի բեմը տանելու համար: XVI—XVII դարերում, պարսկա-ոսմանյան պատերազմների ժամանակ, հուշարձանը նաև վորպես ամրոց է ծառայել թշնամիներից պաշտպանվելու համար: Արուճի վանքը թե գրսից և թե ներսից ունի արձանադրութեաններ. կառուցմանը վերաբերող արձանագրութեանը յեղծված է, իսկ մյուսների մեջ խոսվում է

գլխավորապես հարկերի, կալվածների և ջրի շուրջը տեղի ունեցած ընդհարումների մասին:

Պատմագիրների հիշատակած Գրիգոր Մամիկոնյանի ապարանքը, վորը Իրասխանակերտցին աբբունիք է անվանում, գտնվում է տաճարից մոտ 60 քայլ դեպի հարավ-արևելք, ձորի յեզրին. ապարանքի միայն ներքին հարկի պատերն են մնացել՝ մոտավորապես 1,5 մետր բարձրությամբ: Այս ապարանքի մնացորդները ցույց են տալիս, վոր բուն ապարանքը շինված է յեղել յեկեղեցու նման, սրբատաշ մեծ քարերից. այդ մնացորդներից միաժամանակ յերևում է, թե վորքան շքեղ է յեղել ամբողջ շինքը: Ապարանքից ցածր, ձորի լանջին, դեռևս կա մի աղբյուր, վորը շինվել է Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ:

Գյուղի այգիներից դուրս, հարավային կողմում գտնվում է մի հին կիսաքանդ քաղաքացիական շինք, վորը, հավանաբար, վորպես իջևան է ծառայել առևտրականների համար:

Կ Ո Շ (հնում՝ ԿՈՒԱՇ)

Ս. Ս. Սեփաղոսի վանք.— Կոշ գյուղն ընկած է Արագածի լանջին, Աշտարակից 18 կիլոմետր հեռավորության վրա: Կոշում յեղած նշանավոր հուշարձաններից է VII դարում շինված՝ Ստեփանոսի վանքը, վորը գտնվում է գյուղի արևելյան յեզրում: Հուշարձանը խաչաձև է, գմբեթավոր, առանց սյուների, պատերը շինված են սրբատաշ քարից՝ բարձրադիր և քառակուսի լուսամուտներով. դռները զարդարված են քանդակներով (Ալբոմ՝ նկ. 36):

Բ. Ամբոց.— Գյուղի հյուսիս-արևելյան կողմում գտնվում է մի ամրոց, վորը նույնպես շինված է սրբատաշ քարից: Այս ամրոցը պատերազմների ժամանակ բնակչության համար ծառայել է վորպես պաշտպանութեան վայր. այժմ այդ հուշարձանը գտնվում է կիսավեր վիճակում (Ալբոմ՝ նկ. 37):

Դ Ը Ղ Ր Ի (հնում՝ ՏԵՂԵՐ)

Դըղբի գյուղը գտնվում է Աշտարակից 12 կիլոմետր հեռավորության վրա, Արխաշա գետի աջ ափին: Դըղբի գյուղը հայտնի չէ XIII դարում կառուցված մի հուշարձանով, վորը կոչվում է ս. Ասավածածին: Շինութեան թվականը ՈԶԱ (1232) թ. քան-

գակված է տաճարի դավթի արևմտյան դռան վրա: Հուշարձանը կառուցված է առանց սյուների, սրբատաշ քարից:

Գլխավոր հուշարձանի արևմտյան կողմում չորս սյուների վրա շինված է ընդարձակ կամարակալ գավթը: Վանքն ունի յերեք գմբեթ, վորոնցից յերկուսը գտնվում են գավթի վրա, իսկ ներքևի մասում կան մեկական մատուռներ: Հուշարձանը շրջապատված է պարսպով, վորը կառուցվել է 1468 թվականին (Ալբրոմ՝ նկ. 38):

Ա Ղ Ց

Ազգ գյուղն ընկած է Աշտարակից արևմուտք 7 կիլոմետր հեռավորության վրա: Այնտեղ IV դարում կառուցված է մի փոքրիկ գեոմետրիկ մատուռ, վորի տանիքը հավասար է գետնին և արևմտյան կողմից ունի մի ցածր մուտք: Այս հուշարձանն իր կառուցվածքով յեղակի յե. նա փոքր է, վոչ մի լուսամուտ չի ունեցել: Ներսից յերկու կողմերում կան դամբարաններ. հուշարձանի պատերը ներսի կողմից զարդարված են կենդանիների և մարդկանց բարձրաքանդակներով: Հարավային պատի վրա պատկերված է մի աղվես և մի թռչուն, վորոնք ուտում են խաղողի վողկույղը: Մատուռի հյուսիսային կողմում քանդակված է բազիլատարած մի մարդ, վորի վրա յերկու կողմից հարձակվում են առյուծներ: Այս բարձրաքանդակները պատկանում են IV դարին (Ալբրոմ՝ նկ. 39):

Ո Շ Ա Կ Ա Ն

Ոշական գյուղը Հայաստանի պատմական նշանավոր վայրերից մեկն է յեղել: Նա գտնվում է Աշտարակից 5 կիլոմետր հեռու, խճուղու վրա: Նրա հուշարձաններից նշանավոր են՝

Ա. Գուլմեհներ-կրոմեխներ.— Ոշականի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան կողմերում, ղլխավորապես Քասախ գետի ձորի ուղղությամբ մինչև Աշտարակ գյուղը, տարածվում են բազմաթիվ գուլմեհներ, կրոմեխներ և նախաքրիստոնեական շրջանին պատկանող գերեզմաններ ու դամբարաններ (Ալբրոմ՝ նկ. 40):

Բ. Յիկուպյան բերդ.— Գյուղի ծայրին կա յերկու բլուր, վորոնցից մեկն ավելի մեծ է և բարձր: Վերջինս վոչ այլ ինչ է, բայց յեթե ցեկուպյան բերդի մնացորդ: Մեծ բլուրը գյուղացի-

ներն անվանում են «Դիտի Կոնդ»: Այս բարձր կոնդի դագաթին տակավին յերևում են հսկայական վորձաքարերով անշաղախ շինված ամրոցի մնացորդներ և ամրոցի մեջ՝ բնակարանների հիմքեր:

Գ. Դամբարան.— Յերկրորդ կոնդը, վորը քիչ հեռու յե «Դիտի Կոնդ»-ից, անհամեմատ փոքր է, սակայն դարձյալ պատկանելի մեծութուն ունի, և գյուղացիք «Գյուլլե Կոնդ» անունն են տալիս. դա վոչ այլ ինչ է, բայց յեթե մեծ դամբարան:

Դ. Մեսրոպ Մասոցի գերեզմանը.— Ոշական գյուղը խոշոր նշանակութուն է ստանում IV դարում, Արշակունիների տիրապետության ժամանակ: Այս գյուղը յեղել է Ամատունիների տոհմի սեփականութունը, վորտեղ թաղված է յեղել նաև հայերեն գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը. վերջինիս գերեզմանի վրա կառուցվել է մի յեկեղեցի:

Մինչև V դարի սկիզբը հայերն իրենց սեփական գիրն ու գրականութունը չեն ունեցել: Սակայն, V դարում նրանք ստեղծում են իրենց տառերը և հիմք դնում հայերեն գրականությանը: Այդ գործին նախաձեռնութունը պատկանում է Մեսրոպ Մաշտոցին, վորին ոժանգակել և ժամանակի կաթողիկոս Սահակ Պարթևը: Մեսրոպ Մաշտոցը յերկար ժամանակ յեղել է ղինվորական ծառայության մեջ, վորպես քարտուղար աշխատել է արքունիքում, լինելով այդ ժամանակվա գիտուն մարդկանցից մեկը, գիտեր արևելյան մի շարք լեզուներ՝ ասորերեն, պարսկերեն, հունարեն և այլն: Յերկարատև հետազոտութուններից հետո նրան հաջողվում է մի շարք լեզուների ողնությամբ հորինել հայերեն տառերը և հիմք դնել հայոց լեզվին ու գրականությանը:

Հետագայում, 1639 թվականին, Մեսրոպի գերեզմանի վրա յեղած յեկեղեցին վերանորոգվել է. յեկեղեցին առանց սյուների յե, ներսից ունի յերկու խորան: Հուշարձանի վրա յեղել են մեծ մասամբ XIII դարին պատկանող արձանագրութուններ¹:

Ե. Մախրաձան.— Նորակառույց յեկեղեցու ձախ կողմում, Ոշականից Աշտարակ տանող խճուղու յեղրին, բարձրանում է Մորիկ կոթողը: Այդ մահարձանը շինված է մեծ պատվանդանի վրա, վորի խոյակը զամբյուղաձև է և, հավանաբար, կառուցված է յեղել VII դարում (Ալբրոմ՝ նկ. 41):

¹ Այս հին յեկեղեցին Գեղորդ կաթողիկոսը հիմքից քանդում է և նրա տեղում 1879 թվականին շինում է բոլորովին նորը:

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԻ ԱՅԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂՈՒՄ

1. Հին յեկեղեցու մնացորդներ.— Գտնվում են գյուղի կենտրոնում, հուշարձանը կառուցված է կարմրավուն սրբատաշ քարից, ունի արձանագրություն:

ԱՇՏԱՐԱԿ ԳՅՈՒՂՈՒՄ

2. Սպիտակավոր յեկեղեցի.— Գտնվում է Բերդաթաղում, քարաժայռի գլխին, պատկանում է XIII դարին:

3. Հին յեկեղեցի.— Գտնվում է գյուղի հարավային ծայրում, Շուխանց այգիների մեջ, կիսավեր վիճակում:

ԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

4. Ամրոց.— Պատկանում է նախնադարյան շրջանին, գտնվում է գյուղից ներքև, յերկու բլրի վրա, շինված է մանր քարերից:

5. Մասուռ.— Գտնվում է գյուղից դեպի արևելք, Ղոյթուր տանող ճանապարհին:

ԼԱԶՐԵՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

6. Ամրոց.— Կոչվում է «Գյավուր կալե», պատկանում է նախնադարյան շրջանին:

ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂՈՒՄ

7. Հին յեկեղեցու մնացորդներ.— Գտնվում են գյուղի կենտրոնում, հուշարձանը պատկանում է XIII—XIV դարերին:

ԿՈՇ ԳՅՈՒՂՈՒՄ

8. Յեկեղեցի.— Պատկանում է XIII դարին:

9. Ս. Կիրակոս յեկեղեցին.— Արևմտյան պատը կամարակապ

է և վորպես դուռ է ծառայել: Ճանիքն ամբողջապես քանդված է, մնում են կիսապատերը, հարավային պատի վրա կա արձանագրություն:

ԿՈՅՅՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ

10. Ամրոց.— «Բերդթափա» — նախնադարյան ամրոց, գտնվում է Դըղը տանող ճանապարհին:

ՂԱՐԱԶԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ

11. Հին յեկեղեցու մնացորդներ.— Գտնվում են գյուղի կենտրոնում:

12. Խաչքարեր.— Գտնվում են գյուղի կենտրոնում և շրջակայքում:

13. Քարայրեր.— Բնական և արհեստական քարայրեր, վորոնք տարածվում են ձորի ամբողջ յերկարությամբ. քարայրերից շատերն ունեն քարե դռներ:

ՇԱՄԻՐԱՍ ԳՅՈՒՂՈՒՄ

14. Նախնադարյան բերդեր յեվ այլ մեգալիթյան հուշարձաններ գյուղի օջախայնում:

ՈՇԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

15. Ս. Իսիդոր մասուռ.— Գտնվում է Կոնդ բլուրի հարավարևելյան լանջերի վրա, կիսավեր վիճակում:

16. «Թուխ Մանուկ» մասուռ.— Գտնվում է գյուղի հարավարևելյան մասում:

17. Ս. Սարգիս.— Գտնվում է Քասախ գետի ձախ ափին. այս հուշարձանը քարափափոր է, պատերին փորագրված է 1625 թվականի մի արձանագրություն:

18. Բնակատեղի (Մանկանոց).— Ավերակ գյուղի մեջ շինված է մի փոքրիկ յեկեղեցի «ս. Սիոն» անունով. կառուցվել է 1200 թվականին:

19. Կամուրջ.— Կառուցված է 1706 թվականին, սրբատաշ քարից:

ՈՐԳՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ

20. Նախնադարյան բերդ.— Գտնվում է գյուղի մոտ:

21. Գերեզմանատուն.— Գտնվում է գյուղի մոտ, բլրի վրա. կան քանդակազարդ հին տապանաքարեր:

ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂ (հնում՝ ՎժԱՆ)

22. Հին յեկեղեցու մնացորդներ:

23. Գարաշեր.— Տարածվում են ձորում. դրանցից մեկի վրա կան քանդակներ:

ՎՈՍԿԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ

24. „Ս. Հովհաննես“ յեկեղեցի.— Գտնվում է գյուղի կենտրոնում, կառուցված է VII դարում:

25. „Ս. Երսուհի“ ամրոց.— Նախնադարյան բերդ-շին:

26. Մատուռ.— Գտնվում է Ախթամիր ամրոցի մոտ, կառուցված է XVI—XVII դարերում:

27. Մեզալիսյան հուշարձաններ.— Տարածվում են գյուղի արևմտյան կողմում:

ՓԱՅՐԻՆՁ ԳՅՈՒՂՈՒՄ

28. Հին յեկեղեցու մնացորդներ.— Գտնվում են գյուղի կենտրոնում, սրբատաշ քարից, հուշարձանը շինվել է XIV դարում:

ՓԵՐՍԻ ԳՅՈՒՂՈՒՄ

29. „Ղալայի“ ամրոց.— Գտնվում է Իլան-Բալան տանող ճանապարհին, պատկանում է նախնադարյան շրջանին:

В В Е Д Е Н И Е

Современный Аштаракский район составляет часть древней провинции Арагацотн т. е. „Подножье Арагаца“ (Алагеза).

Провинция эта, охватывающая южные склоны Арагаца, была одной из самых плотно населенных областей Армении с глубокой древности, благодаря своим природным укреплениям, пышной растительности и обильным водяным ресурсам. На этой территории с давних времен обитали многочисленные племена, покоренные в VIII в. н. э. халдо-урартийскими царями Вана.

Халдо-урартийские цари, Менуа (810—780), Аргишти (780—755) Руса (730—714) завоевали долину Аракса, затем овладели областями вокруг Арагаца, Ширакской (Ленинканской) (равниной и бассейном оз. Севан. Об этих халдских завоеваниях в Аштаракском районе говорят клинообразные надписи, напр. в с. Талише (Древнем Арудже) и другие памятники материальной культуры. Помимо этого в районе, начиная от Аштарака до с. Шамирам, в окрестностях встречаются многочисленные остатки материальной культуры от эпохи родового строя Армении. В Аштаракском районе можно встретить не мало построек, возведенных из крупных камней и служивших жилищем древнему человеку. На востоке от с. Ошакана на холме Конде виднеются остатки крепостных сооружений относящихся к культуре последнего периода первобытного общества. Подобными памятниками богаты окрестности с. с. Лазревана и Парби, лежащей к северу от с. Парби местности Гявур-Кала и по пути от Амберты к с. Дыгиру. Остатками древней материальной культуры—менгирами, кромлехами и дольменами. Усеяно особенно все поле по пути от с. Коша к с. Шамирам.

К эпохе родового быта относятся связываемые с культом воды огромные камни, носящие название „вишапов“. Эти камни высечены в виде рыб с разнообразными изображениями на поверхности. Подобные вишапы обнаружены на склонах Арагаца выше Амберта, на возвышенности у левого берега р. Архашана.

В эпоху феодализма в районе Аштарака ряд деревень составляли собственность армянских царей Аршакидской династии; они служили для них крепостями, зимними замками или гарнизонными стоянками. Нынешнее село Талиш (др. Арудж) служил при аршакидах, как военной стоянкой, так и зимней резиденцией. В Ахце находятся усыпальницы Аршакидских царей. Другие деревни Арагацотнской провинции были во владении разных феодальных фамилий; так, с. Ошакан, где погребен изобретатель армянских письмен Месроп Маштоц, был собственностью дома Аматуни.

По всем протяжении каньонар Касаха по склонам имеются естественными и искусственными пещерами, служившие во время военных столкновений надежным убежищем для населения в течение всех веков.

Как известно, VII в. отмечает в истории Армении усиленным архитектурным строительством. От этого времени в районе Аштарака сохранились великолепные храмы в с. с. Талише и Егварте, возведенные князьями Мамиконянами и занимающие характерными особенностями своей архитектуры выдающее место среди памятников эпохи.

Багратиды для которых центральной резиденцией был гор. Ани, с конца IX в. обратили Амберт в одну из главных крепостей своего царства. Она была построена князьями Пахлавуни, но позже была куплена у них Багратидами. После падения царства Багратидов, в XI в. строительство, вследствие нашествий сельджуков и постоянных внутренних войн в различных местностях Армении, задерживается, сильные феодальные роды или уничтожены или ушли из родной страны.

В XII—XIII в., когда в северных областях Армении устанавливается власть грузинских царей, в Армении сно-

ва усиливаются и начинают играть крупную политическую роль некоторые армянские феодальные дома, которые захватывают обширные поместья и предоставляют большие средства на строительство. Среди этих новых феодальных семейств выделяется особенно дом Захаридов, которому удается подчинить себе большую часть северной Армении. Из этого дома вышли спасалары грузинских царей Георгия и Тамары. Из Захаридов Захаре и Иване придавали большое военное значение провинции Арагацотн. Они отняли у сельджуков Амберт и в ознаменование этого завоевания там в 1200 г. воздвигли победный памятник, который в настоящее время находится у дверей церкви в сел. Инаклу.

